

Հաստատված է

Վավերացնում եմ,

ՀԱԱՀ գիտական խորհրդում

ռեկտոր

Ա. Թարվերդյան

„-----„ ----- 2016 թ.

„-----„ ----- 2016 թ.

(արձանագրություն №)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ <<ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԵՎ
ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՋՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ>>

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Հայաստանի ազգային ագրարային համալսարանի (այսուհետ՝ համալսարան) <<Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններում ջրի օգտագործման կառավարման հետազոտական կենտրոնը>> (այսուհետ՝ ԳԳԿՏՁՕԿՀԿ) ստեղծվել է ՀԳԱ-ի գիտական խորհրդի 2002թ. հունվարի 16-ի 6 որոշման համաձայն և ՀԳԱ ռեկտորի 2002թ. թիվ 29Կ հրամանով:

1.2. ԳԳԿՏՁՕԿՀԿ-ի լրիվ անվանումը <<Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններում ջրի օգտագործման կառավարման հետազոտական կենտրոն>>

1.3. ԳԳԿՏՁՕԿՀԿ-ն համակարգում է գյուղացիական, գյուղացիական կոլեկտիվ և ֆերմերային տնտեսություններում, գյուղական համայնքների վարաչական տարածքում ջրի օգտագործման արդյունավետ կառավարման հետազոտական աշխատանքները:

1.4. ԳԳԿՏՁՕԿՀԿ-ն իր գործնեությունն իրականացնում է՝ ելնելով հանրապետության ջրային պաշարների արդյունավետ օգտագործման գիտական և կիրառական ուղղություններից:

1.5. ԳԳԿՏՁՕԿՀԿ-ի գիտահետազոտական աշխատանքներում ներգրավվում են ինչպես համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը, գիտաշխատողները, ասպիրանտները, մագիստրանտները, ուսանողները, ուսումնաօժանդակ

աշխատողները, այնպես էլ գյուղացիական, գյուղացիական կոլեկտիվ և ֆերմերային տնտեսությունների, ջուր սպառող կազմակերպությունների և այլ տնտեսավարող սուբյեկտների մասնագետները ու հոդօգտագործողները:

1.6. ԳԳԿՏՁՕԿՀԿ-ն հետազոտական աշխատանքները կազմակերպում է հաստատված ծրագրերի հիման վրա, համագործակցելով համալսարանի մասնագիտական ամբիոնների, ՀՀ կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեի, Ագրոգիտասփյուռ դեպարտամենտի, գիտական կենտրոնների, տեղական և արտասահմանյան տարբեր կազմակերպությունների, հիմնադրամների, ՀՀ գյուղատնտեսության նախարարության և այլ կազմակերպությունների հետ:

2. ԳԳԿՏՁՕԿՀԿ-ի նպատակը և խնդիրները

2.1. ԳԳԿՏՁՕԿՀԿ-ի նպատակն է գիտահետազոտական և կիրառական ծրագրերի միջոցով գյուղացիական, գյուղացիական կոլեկտիվ և ֆերմերային տնտեսություններում և այլ տնտեսավարող սուբյեկտներում ջրօգտագործման արդյունավետ կառավարման միջոցով ապահովել գյուղատնտեսական մշակաբույսերից բարձր և կայուն բերք, պահպանելով շրջակա միջավայրի ագրոէկոլոգիական հավասարակշռությունը:

2.2. ԳԳԿՏՁՕԿՀԿ-ի խնդիրներն են՝

- համակարգել ԳԳԿՏՁՕԿՀԿ-ի միջոցով իրականացվող ծրագրերի շրջանակներում գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններում և այլ տնտեսավարող սուբյեկտներում ջրօգտագործման արդյունավետ կառավարման գիտահետազոտական և կիրառական աշխատանքները,
- ստեղծել անհրաժեշտ նյութատեխնիկական նախադրյալներ գիտահետազոտական, փորձարարական, ուսուցողական և կիրառական բնույթի աշխատանքներ կատարելու համար,
- մշակել տարբեր հոդօգտագործման բնասահողային գոտիներում գյուղատնտեսական մշակաբույսերի օպտիմալ ջրասպառումով տարբերակված ոռոգման ռեժիմ,
- գյուղացիական, գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններում ներդնել ոռոգման գործընթացի կազմակերպման նոր տեխնոլոգիաներ,
- կազմել նախագծեր և իրականացնել ոռոգման աղբյուրների արդյունավետ օգտագործման ուղիները,

- ներդնել ջրման գործընթացի կազմակերպման ժամանակակից տեխնոլոգիաներ,
- իրականացնել խորհրդատվական, ուսուցողական, տեղեկատվական աշխատանքներ՝ հիմք ընդունելով տնտեսվարող սուբյեկտներում հետազոտությունների արդյունքները,
- մշակել ոռոգվող հողատարածքների մելիորատիվ պայմանների բարելավման և հողերի բերրիության բարձրացման ուղիները,
- հետազոտել և իրականացնել ոռոգման փոքր աղբյուրների օգտագործման հնարավորությունները,
- նախագծել և կազմակերպել ոռոգման ու դրենաժային համակարգերի փորձացուցադրական աշխատանքներ,
- իրականացնել գյուղական խորքային հորերի շահագործման և ոռոգման ջրի արդյունավետ օգտագործման մոնիթորինգ:

3. ԳԳԿՏՁՕԿՀԿ-ի ֆինանսավորման աղբյուրները

3.1. ԳԳԿՏՁՕԿՀԿ -ի ֆինանսավորման աղբյուրներն են հանդիսանում.

- ԱՄՆ ԳԴ գյուղատնտեսության զարգացման ծրագրերը և այլ կազմակերպությունների կողմից հատկացվող միջոցները,
- պետական բյուջեից հետազոտական թեմաներին հատկացվող նպատակային միջոցները,
- բարեգործական նպատակներով տրամադրվող միջոցները,
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ աղբյուրները:

3.2. ԳԳԿՏՁՕԿՀԿ-ի ծրագրերի և անձնակազմի վճարման հաշվարկները իրականացնում է ՀԱԱՀ-ի հաշվապահությունը ըստ կնքված պայմանագրերի, ստացած դրամաշնորհային միջոցների հաշվին:

3.3. ԳԳԿՏՁՕԿՀԿ-ի ֆինանսական միջոցները տրամադրվում են ֆինանսավորող կողմի հետ համատեղ իրականացվող ծրագրերում նախատեսված վարչատնտեսական ծախսերի հաշվին: Ֆինանսական միջոցները փոխանցվում են ՀԱԱՀ-ի հաշվարկային հաշվին, և նրա հաշվապահության միջոցով իրականացվում են բոլոր հաշվարկները:

4. ԳԳԿՏՁՕԿՀԿ-ի իրավասություններն ու պարտականությունները հետազոտական աշխատանքների կատարման բնագավառում

- 4.1. Ջրի արդյունավետ օգտագործման վերաբերյալ իրականացվող ծրագրերի համակարգում և վերահսկում:
- 4.2. ԳԳԿՏՁՕԿՀԿ-ի հետազոտական գործունեության տարեկան հաշվետվության կազմում և ներկայացում ՀԱԱՀ-ի գիտական խորհրդին:
- 4.3. Ֆինանսավորվող ծրագրերի հայտերի քննարկում ՀԱԱՀ-ի և ֆինանսավորող կազմակերպությունների խորհուրդներին:
- 4.4. ԳԳԿՏՁՕԿՀԿ-ի գործունեության փոփոխության վերաբերյալ առաջարկությունների մշակում:
- 4.5. Ջրօգտագործման կառավարման հետազոտական աշխատանքների կազմակերպման նպատակով սարքավորումների ձեռքբերում:
- 4.6. Խորհրդատվական, ուսուցողական և տեղեկատվական խորհրդաժողովների կազմակերպում:
- 4.7. Կիրառական նշանակություն ունեցող հետազոտական արդյունքների հրատարակում:

5. ԳԳԿՏՁՕԿՀԿ-ի իրավասություններն ու պարտականությունները հետազոտական արդյունքների ներդրման բնագավառում

- 5.1. ԳԳԿՏՁՕԿՀԿ-ի մասնագետներն ուսումնասիրում են կատարված հետազոտական աշխատանքների արդյունքները, կազմում են ներդրման անհրաժեշտ ծրագրեր, ներկայացնում են ֆինանսավորող կազմակերպություններին դրամական միջոցներ ստանալու և այն իրականացնելու համար:
- 5.2. Կատարած հետազոտության արդյունքների հիման վրա մշակված կիրառական առաջարկները ներդրվելու են գյուղացիական, գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններում և այլ տնտեսվարող սուբյեկտներում:

6. ԳԳԿՏՁՕԿՀԿ-ի իրավասություններն ու պարտականությունները Հետազոտական աշխատանքների նյութատեխնիկական ապահովման բնագավառում

- 6.1. Սահմանված կարգով հետազոտությունների և ներդրումային ծրագրերի իրականացման համար առաջարկությունները ներկայացվում են ֆինանսավորող կազմակերպություններին:

6.2. Ըստ գործող կարգի, նյութական և տեխնիկական միջոցները ձեռք են բերվում ծրագրի նախահաշվով՝ սահմանված կարգով:

6.3. ԳԳԿՏՁՕԿՀ կենտրոնի գույքը հանդիսանում է ՀԱԱՀ-ի հաշվեկշռային գույք:

7. ԳԳԿՏՁՕԿՀ-ի կառավարման կառուցվածքը

7.1. ԳԳԿՏՁՕԿՀ կենտրոնի բարձրագույն մարմինը հանդիսանում է կառավարման խորհուրդը, որը ստեղծվում է հետևյալ կազմով. ՀԱԱՀ-ի ռեկտոր, Հիդրոմելիորացիայի, հողաշինարարության և հողային կադաստրի ֆակուլտետի դեկան, Ագրոգիտասփյուռ դեպարտամենտի պետ, ՀԱԱՀ-ի մեկ դասախոս և մեկ ֆերմեր:

7.2. ԳԳԿՏՁՕԿՀ-ի օպերատիվ ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որը համակարգում է մասնագիտական երկու բաժանմունքները հետևյալ անվանումներով

I. Ուսումնամեթոդական, խորհրդատվական և տեղեկատվական բաժանմունք

II. Կիրառական, հետազոտական և փորձացուցադրական բաժանմունք:

7.3. Տնօրենը և բաժանմունքների ղեկավարներն ապահովում են կապը ԳԳԿՏՁՕԿՀ-ի, ջրօգտագործողների, Ագրոգիտասփյուռի և այլ կազմակերպությունների միջև:

7.4. Մասնագիտական բաժանմունքներն ապահովում են արդյունավետ ջրօգտագործման հետազոտական ծրագրերի իրականացումը գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններում:

7.5. ԳԳԿՏՁՕԿՀ կենտրոնի և բաժանմունքների գործունեությունը իրականացվում է սահմանված կանոնակարգի հիման վրա:

8. ԳԳԿՏՁՕԿՀ-ի կառավարումը

8.1. ԳԳԿՏՁՕԿՀ-ի աշխատանքային գործունեությունը ղեկավարում է ռեկտորի հրամանով հաստատված տնօրենը, որին պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում ՀԱԱՀ-ի ռեկտորը՝ գիտական խորհրդի համաձայնությամբ:

8.2. Տնօրենը համակարգում է ջրօգտագործողների կառավարման հետազոտական ծրագրերը, հետևում դրանց՝ կատարմանը և պատասխանատվություն է կրում կենտրոնի բնականոն գործունեության համար:

8.3. ԳԳԿՏՁՕԿՀ-ն անմիջականորեն վերահսկում է ծրագրերի կատարման ընթացքը, գիտափորձական հետազոտությունների կատարման գործընթացը:

9. ԳԳԿՏՁՕԿՀ-ի բաժանմունքի պարտականությունները

9.1. ԳԳԿՏՁՕԿՀԿ-ի երկու մասնագիտական բաժանմունքների ղեկավարները վերահսկողություն են սահմանում ծրագրերի կատարման ընթացքի նկատմամբ և պատասխանատվություն են կրում հետազոտությունների արդյունքների համար:

9.2. Մասնագիտական բաժանմունքների խնդիրներն են՝

- ուսումնասիրել ջրօգտագործման կառավարման տարբեր բնագավառների թեմաների հայտերը, և ներկայացնել առաջարկություն կառավարման խորհրդի քննարկմանը,
- ընդունել ծրագրերի կատարման հաշվետվությունները և կարծիքներ ներկայացնել ԳԳԿՏՁՕԿՀԿ-ին,
- աջակցել ուսուցողական, խորհրդատվական, գիտամեթոդական համա-ժողովների, գիտաժողովների և խորհրդակցությունների կազմակերպմանը,
- նպաստել հետազոտական արդյունքների (ձեռնարկների, մենագրությունների, դասագրքերի, հոդվածների, թեզիսների) հրատարակմանը,
- նախապատրաստել նյութեր տարբեր կազմակերպությունների հետ համատեղ գիտահետազոտական, կիրառական աշխատանքների կատարման և դրանց արդյունքների ներդրման վերաբերյալ:

10.ԳԳԿՏՁՕԿՀԿ-ի գործունեության դադարեցումը, լուծարումը և վերակազմավորումը

10.1.ԳԳԿՏՁՕԿՀԿ-ի գործունեության դադարեցումը, լուծարումը և վերակազմավորումն իրականացնում է ՀԱԱՀ-ի գիտական խորհուրդը: